

ւած է մինչեւ ցայսօր. միայն յիշեալներուն թաղուած տեղի մասին անտուգութիւն կը տիրէր: Սաւալանեանցի Երուսաղէմի Պատմութեան թարգմանիչը Գեր. Տ. Մեսրոպ Եպս. Նշանեան կը ծանօթագրէ թէ «1897 տարեոյ Նոյեմբեր ամսուն երբ Ս. Գլխաղբի մատուռին առջեւը նոր քարերով կը սալարկուէր՝ գետինը փորուած ասին մատուռին դրան եւ զիմացի սիւնին մէջտեղը քով քովի երկու ամբողջական կմախքներ երեւան ելան՝ մէկը մեծ և միւս քիչ մը փոքր: Ամենայն հաւանականութեամբ ասոնք ըլլալու են Մարիամ թագուհիին եւ իր Փեննա ազգական նշխարները»:

Ըստ մեր հետազօտութեան, այս ծանօթութեան վրայ, կ'աւելցնենք թէ Լեոն Զ-ի կիներ էր Մարգարիտ որ, Տարտեփ համաձայն, Լեոնի հետ ամուսնացած ու յետոյ գերի տարուած է Եգիպտոս, և հաւանաբար հոն մեռած. իսկ Մարիուն որ կոստանդին Դ-ի այրին էր ու անոր ազգականուհին Փեննա, նմանապէս գերի տարուած էին. այս վերջին երկուքը, հաւանաբար Լեոնն ալ, Երուսաղէմ կու գան ուխտի, Լեոն կ'ուղևորի Եւրոպա, իսկ Մարիուն եւ Փեննա երբ կը վախճանին, Ս. Գլխաղբի առջեւ, սիւնին ներքեւ կը թաղուին. եւ այս բացատրութիւնը հակառակ չէ յիշատակարանաց, վասն զի Մարիունն ալ հայոց թագուհի մ'էր, բայց ոչ Լեոն Զ-ի, ինչպէս շատերը կը կարծեն:

Ս. Գլխաղբիը դուռ մը եւս ունի արևմտեան կողմը, որուն առջեւ կայ փոքր գաւիթ մը, որ է նաեւ մուտքը Ս. Միլևաի մատուռի. հիւսիսի կողմէն դուռ մը կը տանի Ս. Միլևաի մատուռը, ուր կան երկու սեղաններ, մին՝ Ս. Միլևա Աղեքսանդրացիին, եւ միւսն՝ Ս. Սարգիս զօրախորի անուաներուն նուիրուած: Զորս մէթր թեկերով քառակուսի մ'է ամբողջը, պատերը չիկիտաղարդ, մատրանս պատերէն շարուած են վարդապետական և եպիսկոպոսական գաւազաններ, հետաքրքրական գլուխներով: Մատուռը հասարակութեան կը բացուի նոյն երկու սրբոց տներուն և բացառիկ պարագաներուն: Այս մատուռին յարակից է մայր տաճարին գանձարանը, կամ աւանդատունը զանազան բաժանմունքներով, պարունակութեանց տեսակին ու արժէքին համաձայն: Ս. Յակոբայ գանձատունը նշանաւոր է իր մեծահարուստ և բազմաթիւ զարդերով ու սպասներով: Ասոնց շատը Պարոնտէր և Շղթայակիր պատրիարքներու ժամանակներէն պա-